ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի սեպտեմբերի 6-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝
ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ *Գ. Գաբրիելյանի*
Կ.Գրիգորյանի
Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթների անցկացման և հաստատված ծրագրերի ֆինանսավորման գործընթացն ապահովելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Կ.Գրիգորյանին
ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ա.Բիչախչյանին՝
ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին՝
օրենսդրությանը համապատասխան ապահովել ՀՀ Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթների անցկացման և

հաստատված ծրագրերի ֆինանսավորման գործընթացը և արդյունքները ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:
/Ժամկետ՝ 10.09. 2018թ./

Հարց 2. ՀՀ Արմավիրի մարզի Տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային ենթակայության հանրակրթական, ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների կողմից հասարակական, բարեգործական կազմակերպություններին, հիմնադրամներին՝ գումարների փոխանցման, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանում, մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում արհեստակցական միությունների գործունեության օրինականության ուսումնասիրության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին և իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ. Հարությունյանին ՝

ՀՀ Արմավիրի մարզի Տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային ենթակայության հանրակրթական, ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների կողմից հասարակական, բարեգործական կազմակերպություններին, հիմնադրամներին՝ գումարների փոխանցման, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանում, մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում արհեստակցական միությունների գործունեության օրինականության ուսումնասիրության նպատակով ստեղծել համապատասխան աշխատանքային խումբ ՀՀ Արմավիրի մարզպետի ղեկավարությամբ և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ 10.09.2018թ/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

10.09.2018

X

VERIFIED OCSP 10.09.2018 11:08:43 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝
Մ.Առուշանյան.